

ՈՒԼՅԱՍ ՍԱՐՈՅԱՆԻ ԿԱՐԵ ՊԱՏՄՎԱԾՔԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԵԿՆԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԻՑ

Գեղարվեստական ստեղծագործության գոյությունն իսկ ենթադրում է դրա բանասիրական ընթերցում, որը բանասիրական մեկնարվեստի էությունը բացահայտող անհրաժեշտ հետազոտություն է: Ցանկացած գեղարվեստական երկի իմաստառձական յուրահատկությունները, գեղագիտական արժեքն ու հեղինակի նպատակադիր ասելիքը միասնաբար ստեղծում են այն ամբողջությունը, որը տվյալ երկը մեկնելու հնարավորություն է ընձեռում:

Ու. Սարոյանի կարճ պատմվածքի ըննությունը բանասիրական մեկնարվեստի տեսանկյունից ունի իր հիմնավոր պատճառաբանվածությունը: Ի տարբերություն շատ և շատ պատմվածքագիր հեղինակների՝ Ու. Սարոյանի կարճ պատմվածքը չի նշանավորվում հարուստ դիցաբանական, հասարակական-պատմական, մշակութային իրողությունների ու արժեքների բարդ խորհրդանշական կիրառությամբ, որը, անշուշտ, չի ենթադրում այս ամենի իսպառ բացակայություն: Ու. Սարոյանի կարճ պատմվածքն ավելի շատ կառուցվում և հենվում է բարդ ենթատեքստային երգիծական բառախաղերի, հեղինակային նորակազմությունների և պարզագույն ձևակերպումներով խոր փիլիսոփայական եզրահանգումներ կատարելու միտվածության, ուղիղ և անուղղակի խոսքերի միախառն՝ որպես շարահյուսական ոճական միջոցի յուրատեսակ կիրառության վրա:

Ու. Սարոյանի հանրահայտ փիլիսոփայական ձևակերպումներից են.

"Music is like life. It begins and ends in silence."¹ - «Երաժշտությունը նման է կյանքին: Այն սկսվում և ավարտվում է լռությամբ»:

"Everybody is poor, said my grandmother. The richest man in the world is no less poor than the poorest. All over the world, there is poverty of spirit. I never saw such miserliness in people. Give them all the money in the world and they'll still be poor. That's something between themselves and God" (Ibid "Lucy Garoghlianian": 43) - «Բոլորն են աղքատ՝ ասաց տատս: Աշխարհի ամենահարուստ մարդը

1 The New Saroyan Reader, Donald S. Ellis Publisher, San Francisco // Finlandia, 1984, p. 36.
- (Թարգմանություններն իմն են - Դ.Հ., այսուհետև էջերը տե՛ս կից բնագրային և հրատարակված թարգմանությունների մեջբերումներին):

նույնքան աղքատ է, որքան ամենաաղքատը: Ամբողջ աշխարհում ոգու աղքատություն է տիրում: Ես երբեք այսքան ժլատություն չեմ տեսել մարդկանց մեջ: Աշխարհի ամբողջ փողն էլ տաս նրանց, միևնույնն է, դարձյալ աղքատ կլինեն: Դա հենց այն է, ինչ կատարվում է Աստծո և մարդկանց միջև»:

Օրինակները կարելի է բազմապատկել, սակայն գլխավորն այստեղ բանասիրական ընթերցումն է, որը բացահայտում է Ու. Սարոյանի ստեղծածի գեղագիտական ինքնատիպությունն ու այլաբանական, ենթատեքստային շերտի տակ հստակորեն ընդգծվող փիլիսոփայական գաղափարը:

Մեր ուսումնասիրությունը նպատակ ունի բանասիրական մեկնարկների դիտանկյունից առավել մանրամասն ներկայացնել Ու. Սարոյանի կարծ պատմվածքը՝ ելնելով նրա կիրառած լեզվաոճական, գեղագիտական և գաղափարական տարրերի առանձնահատկություններից:

Բարդ ենթատեքստային երգիծական բառախաղերը Ու. Սարոյանի կարծ պատմվածքի գեղագիտությունն ամբողջացնող էական տարրեր են, որով գրողի ձեռագիրը շահեկանորեն առանձնանում է՝ ամերիկյան կարծ պատմվածքի վարպետների հետ համեմատելիս:

Այսպես. "A Writer's Declaration" (139-146) - «Գրողի խոստովանություն»¹ պատմվածքում Ու. Սարոյանն իր պատմությունը կառուցում է առաջին հայացքից թվացյալ պարզագույն զավեշտական իրադրության հենքի վրա:

"I went into the building at Market and Sixth where the offices of the Cypress Lawn Cemetery Company are located. I worked there, too.

The vice-president said: "Do you intend to make Cypress Lawn your lifetime career?"

I said: "Yes, sir."

I got the job.

I quit a month later, but working there was a valuable experience. I remember the arrival of Christmas week and the vice-president's bitter complaint that owing to the absence of an epidemic of influenza the company's volume of business for December over the previous year had fallen 22 per cent.

I remarked: "But everybody will catch up eventually, won't they?"

The vice-president lifted his glasses from the bridge of his nose to his forehead in order to have another look at me.

"I'm a writer", I said. "Unpublished."

He asked me to look at some slogans he had composed for the company: *Inter here. A lot for your money.*

I said he had a flair." (142-143).

1 Տե՛ս Սարոյան Ու., Գրողի խոստովանություն, թարգմ.՝ Դ. Համբարձումյանի, Գրական թերթ, հունիսի 13, 2008, էջ 3, 8:

«Ես մտա «Մարքիթում» և «Վեցերորդում» գտնվող շենքերը, որտեղ տեղակայված են «Նոժիների Մարգագետնի Գերեզմանային Ընկերության» գրասենյակները: Այնտեղ էլ եմ աշխատել:

Փոխնախագահը հարցրել էր. «Դուք մտադիր եք «Նոժիների Մարգագետնի» դարձնել ձեր ողջ կյանքի գործունեությունը»:

Ես ասել էի՝ այո՛, պարոն:

Եվ ստացել էի աշխատանքը:

Մի ամիս հետո հեռացա այնտեղից, բայց այդ աշխատանքն արժեքավոր փորձառություն էր ինձ համար: Հիշում եմ, թե ինչպես Ծննդյան տոներից մեկ շաբաթ առաջ փոխնախագահը դառնագին զանգատվեց, որ գրիպի համաճարակի բացակայության պատճառով ընկերության գործունեության ծավալը դեկտեմբեր ամսվա ընթացքում 22 տոկոսով կրճատվել էր՝ նախորդ տարվա համեմատ:

Ես մշեցի. «Բայց, ի վերջո, բոլորը կվարակվեն, այնպես չէ՞»:

Փոխնախագահն ակնոցը բարձրացրեց քթի կամրջակից ու դրեց ձակա-տին, որպեսզի մեկ անգամ էլ նայի ինձ:

«Ես գրող եմ, - ասացի, - դեռ անտիպ»:

Նա ինձ խնդրեց նայել որոշ լոգունգների, որ ինքն էր ստեղծել ընկերության համար. «Inter here. A lot for your money»:

Ես ասացի, որ նա հոտառություն ուներ»: (3)

«Inter here. A lot for your money» գովազդը միտումնավոր թարգմանվել է ծանոթագրությամբ, քանի որ բնագրում օգտագործված է կրկնակի ենթատեքստով երգիծական բառախաղ. «Հողին հանձնեք այստեղ: Հողատարածք (նաև՝ վիճակահանություն) Ձեր փողի դիմաց»:

Քանի որ "lot" բառը բազմիմաստ է և նրա բառարանային ամրագրված արժեքները երկու բառահոդվածներում իրապես բազմաթեմ ընդգրկումներ ունեն, սկսած «ամբողջ, մեծ քանակություն, ահագին» բառիմաստներից մինչև «վիճակահանություն, ձակատագիր, աժուրդի հանված իր, տեսակահի, հողատարածք» իմաստները, դժվար չէ կռահել, թե ինչ դիպուկ բառընտրություն է կատարել Ու. Սարոյանը՝ տվյալ համատեքստում գործածելով "a lot" բառը երկակի՝ «հողատարածք» և «վիճակահանություն» իմաստներով, ստեղծելով սև հումոր մատնանշող զուտ հեղինակային բառախաղ. «Գնեցե՛ք այս հողատարածքը «Նոժիների Մարգագետնի Գերեզմանային Ընկերությունից», և թաղվե՛ք այնտեղ, եթե կարող եք վճարել», կամ «Փորձե՛ք Ձեր բախտը և օգտվե՛ք այս վիճակահանությունից. եթե Ձեր բախտը բերի, ապա կթաղվե՛ք «Նոժիների Մարգագետնի գերեզմանատանը»: Ահա այսպես Սարոյանի կարծ պատմվածքում շաղկապվում են լեզվաոճական հնարը, գեղագիտությունը ու փիլիսոփայությունը:

Հեղինակային նորակազմությունները ևս մեկ ուրույն «աղյուս» են (Ու. Ֆուլքների խոսքով ասած) Ու. Սարոյանի պատմվածաշինության մեջ:

Անգլերենում այսպես կոչված "portmanteau" - «երկծալ դրամապանակ, երկփեղկ» բառերի ստեղծման հեղինակային իրավունքը Լուիս Բարոլինեն է, սակայն հետագայում նմանատիպ բառերի ստեղծմամբ աչքի է ընկել ոչ միայն ժողովուրդն ինքը՝ ամենօրյա խոսակցական լեզվաշերտը հարստացնելով նորանոր «երկփեղկ» միաձուլումներով (օգտագործելով մեկ բառի առաջին վանկը, մեկ այլ բառի երկրորդ վանկը, համակցելով թե՛ բառակազմերը, թե՛ բառիմաստները), այլև մի շարք հեղինակներ, այդ թվում և՛ Ու. Սարոյանը: Այսպես, վերոբերյալ «Գրողի խոստովանություն» պատմվածքում կարդում ենք.

"Once, when I stayed away from the games for three days running in the hope of having a few dollars in my pocket for Saturday night, Doughbelly kept asking everybody: "Where's that Abyssinian boy?"(143).

«Մի անգամ, երբ երեք օր շարունակ ինձ հեռու պահեցի խաղից՝ հույս ունենալով շաբաթ օրվա երեկոյի համար գրպանումս մի քանի դոլար ունենալ, Դաֆբելին, ում տեսել՝ հարցրել էր. «Ո՛ւր է կորել էդ դժոխքի բաժին հայը»: (3)

"Abyssinian boy" արտահայտությունը, թեպետ, ուղիղ իմաստով նշանակում է «այդ խափշիկ տղան», ելնելով "Abyssinia" - Հաբեշստան, նույն ինքը՝ «Եթովպիա» բառի կիրառությունից, սակայն մեր մեկնաբանությամբ, այն ունի ևս մեկ՝ հավելյալ համատեքստային իմաստ և "Abyss" + "sin" + "Armenian" - «դժոխք» + «մեղք» + «հայ» բառերի վանկային համակցումից ստեղծված նորակազմություն է, որը միմիայն սարոյանական ստեղծարար մտքի արգասիքն է: Ուստի հայերեն թարգմանվածքում, ելնելով բնագրային տեքստին կից համապարփակ ուղղաձիգ համատեքստի թելադրած մեկնաբանությունից, մենք այն ծանոթագրել ենք և ներկայացրել. «Ո՛ւր է կորել էդ դժոխքի բաժին հայը» համարժեքով:

Իսկ ուղղաձիգ համատեքստի իմացությունը ցանկացած գեղարվեստական ստեղծագործության բանասիրական ընթերցման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Տվյալ դեպքում այդ համատեքստը նախահանգստային բեռնակիրների հետ զառ խաղացող հայ տղեկի հանդեպ «Դաֆբելի անունով մեծն նեգրի» հովանավորչական, սիրալիք-արհամարհական վերաբերմունքն է, որը երկուստեք բացահայտում է պատկերված ժամանակի խեղաթյուրված բարոյականությունը և այդ նույն ժամանակի զոհ սևամորթ հսկայամարմին ծերունու և օրավարձու աշխատանքով գոյատևող հայ պատանու լուռ փոխպայմանավորվածությամբ ձեռք բերած բարեկամությունը: Այս առնչությամբ տեղին է հիշել Ի. Գյուրբենետի և Ն. Կատինենեի՝ համապարփակ ուղղաձիգ համատեքստի նկարագրության փոխլրացնող սահմանումները, որոնք ընդգրկում են ընթերցողի նախագիտելիքը գրական երկում պատկերված թե՛

հասարակական-սոցիալական հայացքների, պատկերացումների և գնահատությունների, թե՛ այն բարոյագեղագիտական արժեքների մասին, որոնք ամբողջացնում են ստեղծագործության գեղարվեստական մտահղացումն ու պատկերային համակարգը¹:

Ու. Սարոյանի գրեթե բոլոր պատմվածքներում առկա է հեղինակային խոսքի և կերպարների ուղիղ խոսքի միատարր գործածություն, որը ստեղծում է ինքնատիպ ոճավորում՝ կենդանի և անմիջական հեղինակային ներկայություն, հավաստի ու անբռնազրոս կերպարային խոսքի բարձր հուզականություն:

Այսպիսով, սահմանափակվելով վերոնշյալ մեկնաբանություններով, կարելի է եզրակացնել, որ Ու. Սարոյանի կարճ պատմվածքի բանասիրական ընթերցումը բանասիրական մեկնարկվեստի տեսանկյունից ոչ միայն կարող է նպաստել սարոյանական գեղագիտության, փիլիսոփայության ու լեզվաոճի քացահայտմանը, այլև իր կարևորագույն դերն ունի դրանց հայերեն թարգմանության համարժեքության պահպանման գործում:

1 Гюбенет И.В., Основы филологической интерпретации литературно-художественного текста, М., МГУ, 1991. Катинене Н.Ф., Глобальный вертикальный контекст романов Т. Гарди, Автореф. ... канд. фил. наук, М., 1983.